

ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) հայտարարում է մրցույթ՝ Լոռու մարզպետարանի աշխատակազմում քաղաքացիական ծառայության հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ (ծածկագիր՝ 65-2.2-35)

Մարզում ապահովում է ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանությանն ուղղված քաղաքականություն: Ապահովում է Մարզում կանանց ու տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների հիմնահարցերի ուսումնասիրումը և դրանց լուծմանն ուղղված ծրագրերի մշակումը: Ապահովում է Մարզում կանանց և երեխաների առքուվաճառքի (թրաֆիկինգ) հիմնահարցերի ուսումնասիրումը և գոհերի սոցիալական վերականգնմանն ուղղված ծրագրերի մշակումը, Մարզում հայտնաբերված կանանց և երեխաների առքուվաճառքի (թրաֆիկինգ) գոհերի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը և ՀՀ ոստիկանությանը:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

* սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի 1-ին ենթակետում նշված համապատասխան աշխատանքային ստաժ (տե՛ս սույն հայտարարության 13.4 ենթակետին հաջորդող 1-ին պարբերությունը),

* սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի 2-րդ ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն:

Մրցույթը կկայանա 13.02.2018թ.՝ ժամը 14: 15-ին, Խորհրդի շենքում ք. Երևան, Տերյան 89:

նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է

* բարձրագույն կրթություն՝ իրավագիտություն մասնագիտությամբ,

* քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն երեք տարվա քաղաքացիական ծառայության ստաժ և քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ ՀՀ համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ, կամ համայնքային ծառայության գլխավոր պաշտոնի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ վերջին տասը տարվա ընթացքում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, որից առնվազն մեկ տարին՝ ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում, կամ պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն մեկ տարին՝ ստորաբաժանման ղեկավարի

պաշտոնում,

Դիմող ՀՀ քաղաքացիները ՔԾ խորհուրդ պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

* դիմում՝ մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),

* տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի(ների), վկայականի(ների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին,

* արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ, կամ համապատասխան տեղեկանք,

* մեկ լուսանկար՝ 3X4 սմ չափսի,

* անձնագրի պատճենը:

ՀՀ քաղաքացին մրցութին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:

ՀՀ քաղաքացիները մրցութներին ներկայանում են անձը հաստատող փաստաթղթով: Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9: 30-ից մինչև 12: 30-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 17.01.2018թ.:

Մրցութներին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմ

(ք. Երևան, Տեքյան 89, հեռ. (011) 54-11-38,

(011) 56-64-62) կամ այցելել Խորհրդի պաշտոնական ինտերնետային կայք

(www.csc.am):

Միաժամանակ տեղեկացվում է, որ մրցութներին մասնակցելու համար

ՀՀ քաղաքացիների ներկայացրած փաստաթղթերի պատճենները չեն վերադարձվում: